

ՅՈՒՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱՆՄՈՌԱՑ ԱՆՈՒՆ

Վաղամեռիկ բանաստեղծ ու թարգմանիչ Մանուկ Մաղաթյանի անունը լսելիս ցավի ու ավստասանքի խոր զգացում ես ապրում: Նա «Հյուսիսսփայլի» շրջանի մեր ամենախոստումնալից ու սիրված դեմքերից է, որն, ավա՛ղ, կյանքից հեռացավ իր տաղանդի ամենածաղկուն շրջանում: Նրա կյանքի և կենսագրության մասին, դժբախտաբար, շատ քիչ տեղեկություններ են պահպանվել: Հայտնի է, որ Մանուկ Մաղաթյանը ծնվել է 1840 թվականին Նոր Նախիջևանում:

1853-ին ընդունվել է Մոսկվայի Լազարյան ճեմարան, որն ավարտել է 1858-ին: 1859 թվականից աշխատել է նույն ճեմարանում որպես ուսուցիչ՝ միաժամանակ վարելով նաև վերակացուի պաշտոնը:

Լազարյան ճեմարանում Մանուկ Մաղաթյանի մանկավարժական աշխատանքը շարունակվում է մինչև 1865 թվականը: Նա դեռ մանկությունից տառապում էր թոքախտ հիվանդությամբ, որը գնալով սաստկանում էր: Դրա համար էլ բժիշկները խորհուրդ են տալիս նրան մեկնել ավելի չոր ու տաք եղանակ ունեցող երկիր: Մաղաթյանը նախընտրում է Հայաստանը: 1865 թվականին նա ստիպված է լինում թողնել Մոսկվան և գալ Երևան, ուր և հաջորդ տարվա փետրվարին վախճանվում է, երբ ընդամենը քսանվեց տարեկան էր:

Ժամանակակիցներից մեկը՝ հետագայում պատմաբան ու հնագետ Խաչատուր (Քուչուկ) Հովհաննիսյանը, «Հիշողություններ աշակերտական կյանքից (1863-1872)» անտիպ հուշերում, որ պահվում է Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի իր ֆոնդում (թիվ 90), շատ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Մանուկ Մաղաթյանի մասին, որին հանդիպել է 1863 թվականին: «... Մի բարձրահասակ մարդ, գանգուր, սև մազերով և կապույտ ակնոցով մոտեցավ մեզ, պատմում է Խաչատուր Հովհաննիսյանը: Դա Մանուկ Մաղաթյանն էր, ռուս բանաստեղծ Լերմոնտովի «Демон»-ի շնորհալի հայ թարգմանիչը, որ վարում էր ուսուցչի և դաստիարակի պաշտոնը: Աշակերտները պատկառում էին նորանից և հոգու չափ սիրում էին: ... Նա շատ լուրջ մարդ էր, միշտ մտախոհ և ծանրաշարժ. բնավորությամբ շատ համակրելի էր, չափազանց բարի, բայց ծուլերի վերաբերությամբ միշտ խստապահանջ... Մաղաթյանը և Շահազիզյանը ամենայն երեկո հերթով գալիս էին մեզ մոտ կրկնության և օգնում էին մեզ մեր դասերը պատրաստելու»:

Մանուկ Մաղաթյանը եղել է Սմբատ Շահազիզի ճեմարանական ամենամտերիմ ընկերներից: Նրանց ուսումնառության և մանկավարժական աշխատանքի տարիները Լազարյան ճեմարանում գրեթե զուգահեռաբար են իրար: Ինչպես իրավացիորեն նկատել է բազմավաստակ բանասեր ու գրականագետ Երվանդ Շահազիզը. «Մանուկ Մաղաթյանին և Շահազիզյանին միմյանց հետ կապողը այն հոգեկան միությունն էր, ներքին աշխարհի այն համանմանությունը, որ կար նրանց խառնվածքի մեջ. Մաղաթյանն էլ բանաստեղծ էր: Լերմոնտովի «Դևի» հրաշալի թարգմանությունը ցույց է տալիս, որ եթե բնությունը ավելի երկար կյանք պարգևած լիներ նրան, մեր աշխարհաբար գրականությունը մի գորեղ բանաստեղծով ավելի կունենար»¹:

¹ Սմբատ Շահազիզ, Երկեր, Երևան, 1947, էջ 13:

Երկու ընկերների ծանոթությունն ու մտերմությունը ջերմ ու անկեղծ բարեկամության է վերածվել և շարունակվել մինչև նրանց կյանքի վերջը: Շահագիզը այնքան է սիրել Մանուկ Սադաթյանին և մտահոգվել նրա ճակատագրով, որ երբ ընկերը գտնվում էր հիվանդ ու անօգնական վիճակում, մոսկվաբնակ մի հայ մեծահարուստ վաճառականից տոկոսով 600 ռուբլի փող է վերցնում և նրան ուղարկում Երևան՝ բուժվելու, իսկ հետագայում էլ նրա մահից հետո ինքն է մեծ դժվարությամբ մաս-մաս փոխհատուցում այդ գումարը: Հայտնի է նաև, որ դեռ 1859 թվականին Սմբատ Շահագիզը իր «Պովետ» բանաստեղծությունը «Նվեր Մ. Սադաթյանին» ընծայականով նվիրում է ընկերոջը: Այս բանաստեղծությունը առաջին անգամ տպագրվել է 1860 թվականին Սմբատ Շահագիզի «Ազատության ժամեր» անդրանիկ ժողովածուում (էջ 41):

Հետագայում Սմբատ Շահագիզը Մանուկ Սադաթյանին նվիրել է մի այլ բանաստեղծություն՝ «Բանաստեղծի դամբանին» վերնագրով: Այն ունի նաև «Նվեր Մ. Սադաթյանցի հիշատակին» ընծայականը, գրվել է 1890 թվականին և առաջին անգամ տպագրվել 1893 թվականին «Հոբելյանի տարեդարձ» ժողովածուում (էջ 29-30):

Բանաստեղծությունն ավարտվում է հետևյալ երկու գողտրիկ քառատողերով, ուր անթեղված կրակի պես դեռ մխում է վաղաժամ մահացած ընկերոջ կորստի ցավը.

Եվ թող բնությունն՝ միակ գեղեցիկ,
Ողջունե երգչիս վերջին հրաժեշտին,
Եվ երասխաջուր մարգերի ծաղիկ
Անթառա մ խընկե հայրենի այգին:

Ազատ թուխպերից թո՛ղ պայծառ շողա
Արեգն երկնքին միջօրեական,
Եվ հավե՛րժ մատաղ կյանքի պես խաղա,
Եվ լուսավորե իմ կորա՛ծ դամբան:

Հիրավի, սիրելի ընկերոջ մահվան անդառնալի կորուստը տասնամյակներ շարունակ հուզել է Սմբատ Շահագիզին: Դրա վկայությունը ոչ միայն այս բանաստեղծությունն է, այլև այն գեղեցիկ ու սրտահույզ ձևեր, որ զարդարում է Շահագիզի «Հոբելյանի տարեդարձ» շքեղ գրքի ճակատը: Ձոնը սկսվում է հենց իր՝ Մանուկ Սադաթյանի՝ Լերմոնտովի «Դևը» պոեմի հայերեն թարգմանության առաջին մասի 7-րդ գլխի առաջին տողով. «Վկա՛ է աստղը կեսգիշերային, որ խոր գիշերներով ես ցողել եմ քո անդարձ կորուստը, ո՛վ վաղաթառամ ընկեր: Որպես սիրահար, որպես նետահար ես հանապազ պահել եմ քեզ իմ հիշողությունների մեջ. և այսօր ևս, այս երեսնամյա հոբելյանիս, քո նազելի պատկերը մանուկ գեղեցկությամբ նորից զարթնում է իմ առջև: Ո՛վ իմ սիրելի, քնարիդ լարերերը մի անգամ միայն թնդային և էլեկտրական հոսանքի պես արագ անցան դոքա և լռեցին, վիշտը կուրծքիդ մեջ, սերը շրթունքիդ դու վա՛ղ հեռացար մեզանից, բայց բնության օրենքով ո՛չ մի ուժ, ո՛չ մի գորություն ձրի չէ անցնում-ահա կենդանի ես դու և քո տաղանդը: Թող ուրեմն, անմոռաց ընկեր, այս իմ երկտող նվերը, որպես երկու կաթիլ արտասունք, սրսկե ու

ցողե քո չորացած գերեզմանը»²:

Հայտնի է, իհարկե, որ Մանուկ Մաղաթյանը գրականություն է մուտք գործել որպես բանաստեղծ: Նրա ինքնուրույն բանաստեղծություններից մի քանիսը հեղինակի կենդանության ժամանակ և հետմահու տպագրվել են «Ճռաքաղ»-ի, «Մեղու Հայաստան»-ի և «Արևելյան մամուլ»-ի էջերում: Դրանք բոլորն էլ հավանաբար գրվել են ճեմարանական տարիներին և թեև այնքան էլ չեն փայլում գեղարվեստական տեսակետից, բայց զուրկ չեն որոշ հետաքրքրությունից: Հիրավի, անհնար է չնկատել, որ այդ բանաստեղծությունների քնարական հերոսը, որ ինքը Մաղաթյանն է, խորապես մտահոգված է իր ժողովրդի ու հայրենիքի կյանքով ու ճակատագրով:

Մաղաթյանի առաջին տպագիր փորձը «Դրվատ» վերնագրով բանաստեղծությունն է, որը լույս է տեսել 1859 թվականին «Մեղու Հայաստանի»-ի թիվ 48-ում: Այստեղ Մաղաթյանը ցավով գրում է, որ անձանոթ երկրում «անկիրթ, անուսում» թափառող որդիները խավարով պատված իրենց հայրենիքը «ոչ հիշեն բնավ»:

Ձի ի բացակա հաշխարհս անձանոթ
Արդ որդիք նորա շրջին թափառոտ,
Անկիրթ, անուսումն, պատյալ խավարավ
Չյուրյանց հայրենիս ոչ հիշեն բնավ³:

Հետմահու՝ 1871-1872 թվականներին, «Արևելյան մամուլ»-ում տպագրվել են Մաղաթյանի բանաստեղծություններից երկուսը՝ «Ա՛ն քեզ, Գիրսաս, կարդա՛ցնձա...» (1871, թիվ 12, էջ 282-283) և «Հայաստա՛ն, խեղճ Հայաստա՛ն» (1872, թիվ 1, էջ 32): Առաջին բանաստեղծությունը ուշագրավ է նրանով, որ նոր լույս է սփռում Մաղաթյանի հասարակական-քաղաքական կյանքի ու համոզմունքների վրա: Այս բանաստեղծությունը, ինչպես նկատել է գրականագետ Արամ Ինճիկյանը, ցույց է տալիս, որ «Դևի» հայտնի թարգմանիչը նույնպես մասնակցել է Նալբանդյանի մղած պայքարին⁴: «Գիրսասը» նույն ինքը Սարգիս եպիսկոպոս Ջալալյանն է, որին, ինչպես հայտնի է, Միքայել Նալբանդյանը իր հանրահայտ «Հիշատակարանում» որոշ հնչյուններ հետ ու առաջ տալով «Գիրսաս» էր անվանում:

Մյուսը «Հայաստա՛ն, խեղճ Հայաստա՛ն» սկսվածքով բանաստեղծությունն է, ուր հեղինակը սրտի ցավով է ներկայացնում իր «քաղցրիկ հայրենիքի» խեղճ ու անօգնական վիճակը, տեսնում է, որ նա հիվանդության մահճում պառկած է մենակ, լսում է նրա նվազ ձայնն ու հառաչանքը, բայց ինքն անկարող է օգնության ձեռք մեկնել, քանզի անգոր է ու տկար:

Հայաստա՛ն, խեղճ Հայաստա՛ն,
Ո՛վ հայրենիք իմ քաղցրիկ,
Գիտեմ մահճումդ հիվանդության,
Պառկած ես դու միայնակ:
Նվազ ձայնդ լսում եմ ես
Հառաչանքդ հեռվից,

² Մմբատ Շահազիզյան, Հոբելյանի տարեդարձ, Մոսկվա, 1893, էջ 5:

³ «Մեղու Հայաստանի», 1859, թիվ 48:

⁴ Տե՛ս Ա. Ինճիկյան, Մտերիմներ և մտորումներ, Երևան, 1967, էջ 233:

Բայց ի՞նչ անեմ, ոչինչ եմ ես,
 Ես տկար եմ ամենից:
 Գիտեմ, չունիս ոք միտթար,
 Չունիս բժիշկ քո ցավաց,
 Բայց ի՞նչ անեմ, ավա՛ղ հազար
 Լամ, կսկծամ դառնակոծ:

Բայց Մանուկ Սաղաթյանը հայ գրականության մեջ, բնականաբար, հիշվում է ոչ թե իր ինքնուրույն բանաստեղծություններով, այլ ռուս մեծ բանաստեղծ Միխայիլ Լերմոնտովի «Դևը» պոեմի հայերեն անգուգական թարգմանությամբ: Այս տեսակետից միանգամայն իրավացի է գրականագետ Մերի Սաղյանը, երբ գրում է. «60-ական թվականների սկզբին իր փայլուն տաղանդով աչքի ընկավ Մանուկ Սաղաթյանը Լերմոնտովի «Դևը» պոեմի թարգմանությամբ: Մեծ է նրա դերը հայ նոր պոեզիայի զարգացման գործում հենց որպես «Դևի» հոյակապ թարգմանիչ: Սաղաթյանի այս թարգմանությունը կյանքի կոչեց աշխարհաբար լեզվի մինչ այդ անձանոթ գեղեցկություններն ու կարողությունները, կրթեց իր ժամանակակիցների գրական ճաշակը, հայ ընթերցողին սիրել տվեց ռուս գրականությունը»⁵:

Մանուկ Սաղաթյանի «Դևի» հայերեն թարգմանությունը առաջին անգամ լույս է տեսել «Հյուսիսափայլ» ամսագրի 1863 թվականի դեկտեմբերի և 1864 թվականի հունվար-փետրվար համարներում՝ արժանանալով ջերմ ընդունելության:

Դեպի «Հյուսիսափայլ» ամսագիրը շրջվելը Մանուկ Սաղաթյանի համար բոլորովին էլ պատահական չէր. նա պետք է որ անպայման միանար մեր ամենադեմոկրատական ուղղվածություն ունեցող ամսագրի շուրջը համախմբված լուսավոր մարդկանց՝ Միքայել Նալբանդյանի, Ռաֆայել Պատկանյանի, Սմբատ Շահազիզի խմբին. և շատ տարօրինակ կլիներ, որ չմիանար:

Սմբատ Շահազիզի վկայությամբ՝ «Դևի» հայերեն թարգմանությունը կատարվել է իր «Լևոնի վիշտը» պոեմի հետ միաժամանակ՝ կից սենյակներում: Կասկածից վեր է, որ նրանք իրենց գրածները կարդացել են իրար մոտ և կարծիքներ փոխանակել նրանց մասին:

Սաղաթյանի համար «Դևի» ընտրությունը, ինչ խոսք, բոլորովին էլ պատահական ընտրություն չէր: Գրականագետ Արամ Ինճիկյանի կարծիքով՝ Սաղաթյանին ոչ միայն գրավել է այդ պոեմի գեղարվեստական արժանիքները, այլև ըմբոստ, ազատասիրական ոգին, որ այնքան հարազատ էր հայ վաթսունականների տրամադրություններին⁶:

Հիրավի, Մանուկ Սաղաթյանը «Դևը» պոեմի մեջ տեսել է այնպիսի մի տխուր իրականություն, որը շատ նման է հայ իրականությանը: Ըմբռնվածք մի փոքրիկ հատված նրա այդ թարգմանությունից.

...Ուր ո՛չ ճշմարիտ բախտ կա կենսական,
 Եվ ոչ հարատև գեղեցկություն կա,
 Ուր միայն պատիժն ու մեղքն են լիուլի,
 Ուր կյանքն անցնում է փոքրիկ կրթերով,

⁵ «Հայ նոր գրականության պատմություն», հ. 2, Երևան, 1962, էջ 410:

⁶ Տե՛ս Ա. Ինճիկյան, Մտերիմներ և մտորումներ, Երևան, 1967, էջ 234:

Եվ ուր չգիտեն առանց երկյուղի
Ո՛չ արհամարհել, ո՛չ սիրել հոգով ...

Մանուկ Սադաթյանի «Դևի» թարգմանությունը և Սմբատ Շահագիզի «Լևոնի վիշտը» պոեմը մեծ դեր են խաղացել հայ գրականության, մասնավորապես պոեմի ժանրի զարգացման գործում:

Ավելորդ է ասել նաև, թե ինչպիսի մեծ կորուստ էր մեր գրականության համար Մանուկ Սադաթյանի մահը: Նրան, դժբախտաբար, բախտ չվիճակվեց երկար ապրելու և ստեղծագործելու: Ինչպես ընդունված է ասել, Մանուկ Սադաթյանը ասուպի պես փայլեց մեր գրականության երկնականարում և հանգավ վաղաժամ: Եվ ի՞նչու, որ նրա անունը լսելիս ակամա հիշում ենք մեր մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի լավագույն քառյակներից մեկի «Ինչքան ծաղիկ պիտի բուսներ, որ չբուսավ էս հողին» հանրահայտ տողը:

Հիրավի, Տերյանի բառերով ասած՝

Որքան, որքան մարգարտակուռ
Երգեր, խոսքեր ոսկեհնչյուն,
Ըղձեր, ըղձեր շուշան մաքուր
Դեռ չբացված դարձան աճյուն⁷...

Այո՛, այդպես էլ «Դեռ չբացված դարձան աճյուն» Մանուկ Սադաթյանի շատ ու շատ գրական (և ոչ միայն գրական) մտահղացումներ: Բայց Լերմոնտովի «Դևը» պոեմի հայերեն փայլուն թարգմանության շնորհիվ նրա անունը ավելի քան 140 տարի է, ինչ սիրով ու երկյուղածությամբ է հիշվում հայ գրականության ու մշակույթի պատմության մեջ և դեռ շատ երկար կհիշվի, քանզի Մանուկ Սադաթյանի «Դևի» թարգմանությունը այն սակավաթիվ թարգմանություններից է, որոնց մասին ասվում է. «Հեղինակը կատարել է բնագրին հավասար թարգմանություն»: Հիշենք նաև ռուս-հայ գրական կապերի քաջահմուտ գիտակ, գրականագետ Գուրգեն Հովհանի բարձր գնահատականը: Գրականագետը նկատել է, որ Սադաթյանի մահից հետո «Դևի» նոր թարգմանության շատ փորձեր են եղել, բայց նրանցից և ոչ մեկը չի կարողացել գերազանցել Սադաթյանին⁸: Եվ որ «մեկ դար հետո էլ Սադաթյանի թարգմանությունը պահպանել է իր թարմությունը, իր պոետական բարձր արվեստը»⁹:

⁷ Վ. Տերյան, Բանաստեղծություններ, Երևան, 1980, էջ 91:

⁸ Գ. Հովհան, Ռուս-հայ գրական կապերը XIX-XX դարերում, գիրք երկրորդ, Երևան, 1961, էջ 34:

⁹ Նույն տեղում, էջ 34: